Պօղոս երբ փրկութեան եւ առաքելութեան կանչուեցաւ, Տէրը ըսաւ թէ նա Իր անունը պիտի կրէր նաեւ «Թաղաւորներուն եւ Իսրայէլի որդիներուն առջեւ» (Գործ. Թ. 15) եւ ասիկա պիտի ըլլար շատ նեղութիւն կրելով (հ. 16): Տէրը կ'ընար Պօղոսը ուրիշ միջոցով մը եւ ուղղակի Հոովմ դրկել, բայց այն կերպը որ նա զործածեց, ի՛նչ հրաշալիօրէն իրականացուց վերի խօսքերը: Տէրը զայն նախ Երուսաղէմ դրկեց

(Գ. Առաք. ԺԹ. 21): Անիկա «Հոգիով կապուած» Երուսաղէմ գնաց (Ի. 22-24): Ու թէեւ ուրիշ Տէրոջը զաւակներ շատ ջանացին զայն Երուսաղէմ երթալէ ետ կեցնել, այսու նա գնաց ըսելով, «Ես ոչ թէ միայն Երուսաղէմի մէջ կապուելու հապա նաեւ մեռնելու ալ պատրաստ եմ Տէր Յիսուսի անունը համար» (ԻԱ. 13):

Պօղոս պարտ էր վերջնականապէս եւ վճռականապէս հեթանոսներուն դառնալէ առաջ (ԻԸ. 28) հրէութեան կեղրոնը եղող Երուսաղէմի մէջ վերջին անգամ եւ հսկայ բազմութեան առջեւ վկայել հրեաներուն՝ Տէր Յիսուսի անունը (ԻԲ. 1-21):

Նա պարտ էր կապուիլ Տէր Յիսուսի անունը համար նոր քաղաքին մէջ ուր շատ մը մարգարէներու արիւնը թափուելէ յետոյ՝ Տէր Յիսուս ալ խաչուած էր:

Պօղոսի Երուսաղէմի մէջ ձերբակալուիլը առիթ տուաւ որ նա վկայէ կուսակալներու եւ թաղաւորներու առջեւ ու վերջապէս կարենայ զըրկուիլ Հոովմ, կայսրին դիմաց ելլելու: Շատ ուշադրաւ են այն պարագաները որոնցմով Սատանան ուղեց արգիլել Պօղոսի նախ Երուսաղէմ եւ յետոյ Հոովմ երթալը: Նկատէ հաւատացեալ եղբայրներու թախանձանքին միջոցաւ զայն ետ կեցնելու ջանալը, հրեաներուն զայն պատառել ջանալը կամ քառասունէ աւելի արիւնարբու հրեաներու անէծքի տակ դնելով (ԻԳ. 12) կամ ուրիշ դաւերով զայն սպաննել ջանալով (ԻԵ. 5) կամ նաւուն վրայ ալեկոծութեան պահուն բանտարկեալները սպաննելու դաւադրութիւնը (ԻԶ. 42) կամ նաւը խորտակելով, եւ նոյնիսկ նաւաբեկութեան ազատելէ յետոյ ջանալով Պօղոսը իծի մը միջոցով սպաննելը (ԻԸ. 3):

Բայց Պօղոսի այս կերպ Հոովմ դրկուիլը եւ նոյնիսկ Սատանայի թափած բոլոր հակառակ ջանքերը ալ աւելի սատարեցին առաքեալին աւելի յաճախ, աւելի լայն շրջանակներու մէջ եւ աւելի ուշադրաւ պարագաներու տակ Քրիստոսի համար վկայելուն եւ մանաւանդ Հոովմի մէջ անոր կայսրին բանտը դրուելուն: Քանի մը տարիներ յետոյ նա ալ բանաէն կը գրէր, «Իմ կապերս որոնք Քրիստոսի համար են, բոլոր պալատին մէջ եւ ուրիշ առիւններու ալ յայտնի եղան» (Փիլ. Ա. 13) եւ նոյնիսկ «կայսրին տունէն» հոգիներ շահուած էին (Փիլ. Դ. 23): Այսպէս ինչ որ պատահեցաւ Քրիստոսի այս շղթայակալ դեսպանին՝ նոյնիսկ անոր առիւծին բերանը նետուելու վտանգը (Բ. Տիմ. Դ. 17) ալ աւելի Աւետարանին յառաջդիմութեանը պատճառ եղաւ:

ՆՈՅ. 29.—

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵՂԲԱՅՐԱԿՅՈՒԹԻՒՆ

Դաս Փիլիսոն

Կարգալ Եփես. Գ. 14-21

Փիլիսոնի գրուած թուղթը թէեւ խիստ շահեկան է շատ մը տեսակէտներէ՝ բայց զայն նկատի առնենք հ. 18ի սա խօսքով, «Եւ եթէ քեզի անիրաւութիւն մը ըրած է, կամ պարտք մը ունի, զայն իմ հաշիւիս անցուր», այսինքն փոխանորդական կամ բարեխօսական տեսակէտով: Հոս Պօղոս առաքեալ Քրիստոսի մէկ օրինակը կը դառնայ, իբր Անոր մեղաւորին պարտքը վճարող:

Պօղոս Յիսուս Քրիստոսի կապեալ էր, նա այս շղթաները Յիսուս Քրիստոսի համար կը կրէր ու կարելի է ըսել նաեւ թէ այս շղթաները զայն Յիսուս Քրիստոսի կապած էին աւելի ամուր եւ աւելի մօտիկ (Եփես. Գ. 13):

Այսպէս նա իր կապանքներուն մէջ հոգեւոր զաւակներ կը ծնէր: Ինչպէս Քրիստոս խաչին վերայ գոմուած վիճակին մէջ աւազակը իբր երկինքի զաւակ ծնաւ: Ատեն մը անպիտան եղող զերին հիմա պիտանի դարձած իր նախկին տէրօջը կը վերադարձուի:

«Ընդունէ զանիկա որպէս Թէ զիս» (հ. 17): Այսպէս նաեւ Տէր Յիսուս մեզ կը ներկայացնէ իր Հօրը եւ Հայրը մեզ կ'ընդունի իբր Իւ որդին (Եփես. Ա. 6, Ա. Յովհ. Գ. 17, Կող. Բ. 9, 10 եւայլն):

«Զայն իմ հաշիւիս անցուր» հ. 18): Այս համարը իր մէջ կը պարունակէ Աւետարանին կենսական եւ կեդրոնական վարդապետութիւնը, վասնզի Յիսուս ալ մեր Աստուծոյ ունեցած պարտքը իր հաշիւին անցուց (Մատթ. Ի. 28, Յովհ. Ժ. 11, Հոով. Գ. 25, Ե. 6-8, Ա. Կոր. ԺԵ. 3, Բ. Կոր. Ե. 21: Ա. Պետ. Բ. 24, Գ. 18, եւայլն):


Պօղոս առաքեալի այսքան սիրով, աղօթքով, աղաչանքով, զոհողութեամբ վերահաստատել ուզած զերին, նաեւ «հաւատարիմ եւ սիրելի» եղբայր մը կը կոչուի:

Հետեւողութեամբ

Վ. Ս.

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՃԱՆ ՈՒԷՍԼԻ



Ուէսլիի վերջին տողերը իր օրագրութեան մէջ կը կրեն 1790 Հոկտ. 24 թուականը, այսինքն իր մահուանէն չորս ամիս եւ 9 օրեր առաջ: Այս տողերը կ'ամփոփեն իր ամբողջ քարոզչի կեանքը: «Սփիթալֆիլսոֆի եկեղեցիին մէջ հոժ բազմութեան մը առջեւ քարոզեցի բացատրելով «Աստուծոյ բոլոր սպառազինութիւնը»: Կէսօրէ յետոյ Շէտուէլի մէջ Ս. Պօղոսի եկեղեցին ալ աւելի լեցուն էր մինչ ես շեշտեցի այն կարեւոր ճշմարտութեան վրայ թէ «Մէկ բան պէտք է» եւ կը յուսամ թէ շատեր հոն իսկ որոշեցին աղէկ բաժինը ընտրել»:

Ու թէեւ 88 ամեայ այս ծերունին չկրցաւ այլ եւս իր զողացող մատներով գրիչ գործածել, բայց անիկա շարունակեց քարոզել մինչեւ տակաւին իր մահուանէն 7 օր առաջ:

«Պատուական է Տէրօջը առջեւ իր սուրբերուն մահը» (Սաղ. ՃԺԶ. 13): Ուէսլիի մահն ալ իր Տէրօջը առջեւ պատուական եղաւ՝ եւ անոր վերջին օրերուն իր սնարին վերեւ գտնուողներ գրի առած ու պահած են անոր խօսքերը, որոնց մէջէն կը բուրէ Քրիստոսի յաղթութիւնը մահուան վրայ եւ Անոր ծառային յաղթութիւնը Իրմով:

Իր կեանքի վերջին տարւոյն ընթացքին ամիսներ տեւող աւետարանչական շրջանէ մը վերադարձած Ուէսլի Ուրբաթ 25 Փետր. 1791 իր տունը եկաւ հոն մեռնելու: Նախ խնդրեց որ զինք կէս ժամ առանձին թողուն: Քիչ յետոյ երբ իր հաւատարիմ բարեկամը Պրէսֆօրտ ներս մտաւ, զայն այնքան տկար գտաւ որ իր բժիշկը կանչել տուաւ: Տօքթ. Հուայթհէտ զայն անկողին դնել տուաւ եւ զօրացուցիչ բան մը խմցուց: «Տօքթոր», ըսաւ Ուէսլի, «ասոնք փնասէ աւելի վախ ունին»:

Շաբաթ 26 Փետր. նա շատ տաքութեամբ եւ տկար ու կէս թմրած անցուց:

Կիրակի 27 Փետր. նա օտք ելաւ եւ ինքզինքը աւելի լաւ կ'զգար: Բազկաթոռին մէջ նստելով սկսաւ արտասանել իր եղբոր Զարլֆի գրած Երգերէն միոյն սա համարը.—

Մինչեւ որ ուրախ թողում այս մարմինը,

Տէր օգնէ Քու ծառայիդ

Բու ողորմութեամբդ պսակէ իմ կեանքս
Յաղթական վախճանով մը:

Քիչ լետոյ լսեցին որ կ'ըսէր, «Ղազարոս, մեր բարեկամը կը քնանայ»: Սաստիկ տկարութիւնը ստիպեց զայն կրկին անկողին մտնել: «Դուք խօսեցէք ինծի» ըսաւ նա զինք շրջապատողներուն, «ես չեմ կրնար խօսիլ»: Մէկը առաջարկեց որ աղօթէ, եւ Ուէսլի ուրախութեամբ հաւանութիւն տուաւ. եւ մինչ ուրիշներ կ'աղօթէին, ինք եռանդուն «Ամէն»ներ կ'ըսէր: Կէսօրէ յետոյ ըսաւ, «Ասկէ զատ ուրիշ բան ըսելը կալեւոր չէ. ես մեղաւորներուն ամենէն մեծն եմ, բայց Յիսուս ինծի համար մեռաւ»: Քիչ յետոյ գոչց, «Յիսուս ամէն ինչ է, Յիսուս ամէն ինչ է»: Զերմը զայն թմրեցուց եւ նա անոր սաստկութեան մէջ շարունակ տալիք քարոզներու եւ կ'ազմելիք հոգեւոր խումբերու մասին կը խօսէր. Իրիկուան դէմ կրկին ելլել ուզեց եւ նստելով ըսաւ, «Որքա՛ն անհրաժեշտ է որ ամէն մէկը հաստատուն հիման վրայ ըլլայ. ես մեղաւորներուն ամենէն մեծն եմ, բայց Յիսուս ինծի համար մեռաւ: Մենք պարտինք հաւատքով արդարանալ՝ յետոյ լման սրբութեան մը ետեւէն վազել:

Երկուշաբթի 28 Փետր.ին տկարութիւնը աւելցաւ եւ զրթէ ամբողջ օրը թմրած մնաց: Երբեմն երբեմն չօսքեր կ'արտասանէր որոնց ամէնն ալ կը ցոցնէին թէ իր հոգիին ծարաւն էր եկեղեցիներու ողբ, Աստուծոյ փառքը եւ Անոր թագաւորութեան վերաբերեալ բաները: Շատ մեղմ ձայնով ըսաւ, «Ամենասուրբ տեղը մտնելու համար Յիսուսի արիւնէն ուրիշ ճամբայ չկայ»: Յետոյ քանի մը համուան մէջ 3-4 անգամ յիշեց, «Մենք Յիսուսի լրինովը ամենասուրբ տեղը մտնելու ազատուիւնը ունինք»:

Երեքշաբթի արեւոտ, 1 Մարտ, իր մահուան նախօրեակին՝ շատ անհանգիստ գիշերէ մը յետոյ սկսաւ երգել համար սա երգէն.—

Բարձրութեանդէջ Աստուծոյ փառք
Եւ երկրի վրայ սաղաղութիւն:

Քիչ յետոյ գրիչ եւ մեկնաւ ուզեց, բայց մատերը անկարող էին լիջը շարժել, եւ ըսաւ, «Զեմ կրնար»: Միւս Բի ըսաւ, «Ես քեզի համար կը գրեմ, միայն լէք թէ ինչ գրեմ»: Ուէսլի պատասխանեց «Ուշ ոչինչ, բայց միայն թէ Աստուած մեզի հետ»։ Իրիկուան դէմ ելլել ուզեց եւ վերջին ծառ տկարութեան մէջ իր բարեկամները զարմացահալով իր երգելը.

«Իմ Արարիչս պիտի գեմ, քանի զեռ շունչ ունիմ»: Այս երգը կարծեմ այսօրէն ինչ մէջ այս.

պէս թարգմանուած է. («Հոգեւոր Երգեր» 58).—

Լիզուովս պիտի Աստուծոս գովուի,
Ու երբ մահուամբ իմ ձայնս կտրի
Ալ աւելի պիտի երգեմ.

Անոր փառք տալս չունի վախճան,

Զի երբ օրերս հոս լմըննան,

Վերն յաւիտեանս պիտի երգեմ:

Այս երգը վերջին խօսքերն էին որ նա վեց օր առաջ «Մենք Հոգիով կը սպասենք արդարութեան յոյսին հաւատքով» (Գաղ. Ե. 5) համարին վրայ քարոզելէ յետոյ առաջարկած էր:

Աթոռին մէջ նստելէ յետոյ լանկարծ իր դէմքը մահուան կերպարանք ստացաւ: Բայց նա իր վիճակին չնայած տկար ձայնով ըսաւ, «Տէր, Դուն զօրութիւն կուտաս անոնց որ կրնան խօսիլ, եւ անոնց որ չեն կրնար: Խօսէ Տէր, մեր ամենուն սրտերուն եւ ամէնը թող գիտնան թէ Դուն լեզուները կը քակես»: Յետոյ երգեց.—

Փառք եւ պատիւ ու զօրութիւն,

Հօրն ու Որդւոյն եւ Ս. Հոգւոյն:

Բայց ձայնը կտրեցաւ ու չկրցաւ վերջացնել: «Վերջացաւ մեկնինք» ըսաւ, ինքզինքը ժողովի մը վախճանին ժողովուրդը արձակելու վրայ կարծելով:

Իրիկուան դէմ իր բոլոր ուժը հաւաքելով ըսաւ, «Բնութիւնը... բնութիւնը...» եւ երբ չէր կրնար շարունակել, ներկաներէն մին անոր խորհուրդը ամբողջացնել ջանալով ըսաւ «...Քիչ ատենէն պիտի նուաղի, բայց դուք նոր բնութիւն մը պիտի հագնիք եւ մտնէք երանելի հոգիներու ընկերութեան մէջ»: «Անշուշտ գոչեց նա, յետոյ ձեռքերը իրարու զարնելով Փրկչին անունը արտասանեց եւ իր շրթունքները երկար ատեն շարժեցան, կարծես ջերմութեան աղօթքի մը մէջ:

Անկողնին վրայէն, ուրկէ այլեւս չկրցաւ ելլել, կարծ քունէ մը արթննալով Միւս Բիչին կանչեց եւ ըսաւ, «Աղօթեցէք եւ փառաբանեցէք»: Անոնք ծնրադրեցին, սրտերը Աստուծոյն ներկայութեամբ լեցուած էին, սենեակը Աստուծով լեցուած էր: Անկէ յետոյ իր թաղման մասին մէկ երկու յանձնարարութիւններ ըրաւ, յետոյ կարծեմ թէ երկրի հետ ամէն յարաբերութիւն խզած նորէն խնդրեց որ աղօթք եւ փառաբանութիւն մատուցանեն: Պրէտֆօրս, Հոգիին մէկ մասնաւոր ներշնչումով խնդրեց Աստուծոյն որ Ուէսլի մեկնելէն յետոյ նա շարունակէր Իր օրհնութիւնը տեղալ անոր սկսած դործին վրայ: Հոգեվարք ծնրունին իր ամբողջ ուժը ժողովեց եւ այս աղօթքին ջերմեռանդ «Ամէն» մը ըսաւ: Այս զերագոյն ժամուն իր ետեւը թողելիք հոգեւոր

գործը իր աչքին կատարեալ իրականութիւն դարձուցած եւ իր հոգին լեցուցած էր. գործ մը, որուն անշահախնդիր եւ սուրբ նպատակ ունեցած էր միմիայն Աստուծոյ փառքը եւ հոգիներու փրկութիւնը: Երբ աղօթողները ծունկերնուն վրայէն ելան, Ուէսլի անոնց ամէն մէկէն հրաժեշտ առաւ անոնց ձեռքերը սեղմելով եւ «Մնաք բարի» ըսելով:

Քիչ յետոյ շատ ջանքով բան մը ըսել կ'ուզէր: Բարեկամները յաջողեցան շատ դժուարաւ հասկնալ թէ կ'ուզէր որ իր «Աստուծոյ սէրը ինկած մարդուն հանգէպ» քարոզը մասնաւոր տըպագրութեամբ մը հրատարակուէր եւ ձրիօրէն ցրուէր: Անոր այս փափաքը կատարուեցաւ մահուանէն քիչ յետոյ յիշեալ քարոզէն 10,000 օրինակ տպուելով եւ ձրի բաշխուելով:

Այս միջոցին բարեկամ մը ներս մտաւ. Ուէսլի ջանաց անոր քանի մը խօսք ուղղել, բայց չյաջողեցաւ. իր բոլոր ուժերը հաւաքելով գոչեց, «Ամենէն լաւ բանը այն է որ Աստուած մեզի հետ է»: Ներկաներէն մին կը պատմէ թէ նրկարագրելը անկարելի էր կերպով մը: Իր նիհար ձեռքերը վեր վերցնելով՝ մահու (բայց մահուան վրայ յաղթական) ձայնով մը կրկնեց, «Ամենէն լաւ բանը այն է որ Աստուած մեզի հետ է»: Յետոյ կրցաւ ըսել, «Ասիկա Տէրոջմէն եղաւ, զաբմանալի է ասիկա մեր աչքերուն» Սաղ. ՃԺԸ. 23: Իր հանգուցեալ եղբօր Չարլսի այրի կնոջ ըսաւ, (անոր եւ իր մահուան ակնարկելով) Ան է որ Իր ծառաներուն հանգիստ կուտայ»: Երբ իր չորցած եւ ջերմէն այրող շրթունքները քանի մը կաթիլ ջուրով գովացուցին, նա սկսաւ ճաշելէ յետոյ սովորաբար բրած աղօթքը ընել. «Տէր, կը գոհանաք Քեզմէ Քու բոլոր բարիքներուդ համար: Օրհնէ եկեղեցին եւ թագաւորը եւ շնորհէ մեզի ճշմարտութիւն եւ խաղաղութիւն մեր Տէրոջ Յիսուս Քրիստոսով, յաւիտեանս յաւիտեանից»: Քիչ մը յետոյ ըսաւ, «Օգուտ չունի, պէտք է ընդունինք հետեւանքը, խեղճ կմախքը արժէք չունի»: Քիչ մը դադարէ յետոյ ըսաւ, «Ամպերը պարարտութիւն կը կաթեցնեն»: Եւ յետոյ կցկաւոր բառերով, «Տէրը մեզի հետ է, Յակոբի Աստուածը մեր ապաւէնն է»: Կրկին խնդրեց որ ներկաները աղօթեն: Այդ բոլոր գիշերը շատ տկար անցուց եւ շարունակ կը ջանար ինք. Սաղմոսը արտասանել, բայց բարձրաձայն միայն սա բառերը կրնար ըսել, «Պիտի օրհնեմ... պիտի գովեմ... պիտի...»

Չորեքշաբթի Մարտ 2ի առաւօտը Տէրոջը առջեւ պատուական այս մահուան տեսարանը իր

վախճանին կը մօտենար: Պրէտֆօրտ Ուէսլիի մտերիմ բարեկամը եւ Աւետարանին մէջ իր գինւորակիցը որ քիչ ժամանակ յետոյ գերեզմանին մէջ անոր պիտի հետեւէր՝ անոր վերջին վայրկեաններուն հետը աղօթեց: Վերջին բառը որ լսուեցաւ ձան Ուէսլիի բերնէն «Մնաք բարի» էր: Ժամը տասնին քանի մը վայրկեան շնացած մինչ իր բարեկամները ըստ անոր շատ յաճախ յայտնած փափաքին, մահիճին շուրջ ծունկի եկած կրկին կ'աղօթէին, անոր մարմինը առանց տանջանքի եւ հառաչանքի հանգչեցաւ եւ իր եղբայրներուն ներկայութեան Աստուծոյ այս մարդը «իր ոտքերը անկողնին մէջ ժողկեց ու հոգին աւանդեց» (Ծննդ. Խթ. 32):

Վերջ

Վ. Ս.

ՊԱՏԱՆԵԱՅ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅԻՆ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԸՆԱՆԻՔԻՆ ՄԷՂ

○○○○○

ՉԱԽԱԿՆԵՐՈՒՆ ՊԱՏԱԿԱՅՈՒԹԻՒՆԸ*

(Կող. Գ. 20, 21, Եփես. 2. 4- Առակ. 2. 20

Ղուկ. Բ. 51)

Մեծ մարդ մը ըսած է, «Իչե՛ր պիտի չտայի, եթէ կարելի ըլլար մէ օրուան համար մայրս այս աշխարհը վերադարձնել, որպէսզի ծնկաչոք ներում խնդրէի իրէ այն բոլոր ըրածներուն համար որոնցմով իր փափուկ սիրտը վերաւորած եմ»: Անտարակոյ շատուոր են անոնք որ այսպէս ըսած են, կամ խրոմ աղաղակած են մահուամբ գոցուած ականջներու: Ուղիական այն սէրը որ ծնողաց գերեզմանին եզերքը ի յայտ կուգայ, շատ ուշ հասած ըլլալ: Կրնայ ծաղիկներ տանիլ եւ լալ, սակայն բաներ կան որ անդարմանելի կը մնան: Երբ պէտք է երեւնայ մինչ տակաւին հայր եւ մայր ողջ են: Եթէ փո-

(*) Ընտանեկան բաժնի վերաբերող այս յօդուածաշարքին վերջին մասը գտնվում է պարտականութիւնը յիշեցնելուն համար, Պատմեաց սրահակին մէջ կը գտնվենք, յատկապէս մեզ ցանկանալուն ուշագրութեանը լանձնելու համար:

շեր ցանած էք անոնց քայլերուն առջեւ, ինչի՞ պիտի ծառայեն անոնց գերեզմանին վրայ ձեր դրած ծաղիկները: Ինչի՞ պիտի ծառայէ գեղեցիկ դամբանաքար մը կանգնելը, եթէ զանոնք անպատուած էք անոնց կենդանութեան ատեն:

Ծնողաց համար ամենագեղեցիկ յուշարձանն է զիրենք ուրախացնող զաւակներուն կեանքը, որ կ'իրականացնեն իրենց յոյսերը:

Անոնց կենդանութեան ատենը ձեր քաղցր վերաբերումը անոնց մահուանէն ետք թափուած արցունքներէն լաւ են: Ասիկա միտքերնիդ պահեցէք:

Հնազանդ եղէք.—

Զաւակներուն ծնողաց հանդէպ ունեցած պարտքին ոչ չափ կարելի է դնել, ոչ ալ զաւակները կարող են լման կերպով զայն վճարել: Անիկա ձեր գոյութեան առաջին վայրկեանէն կ'սկսի եւ օրէ օր, տարուէ տարի կը բարդուի: Կայ մանկութեան ժամանակը՝ իր անքուն գիշերներով եւ տագնապներով: Յետոյ կայ դաստիարակութեան ժամանակը, հիւանդութեան պարագաները, անձկութեան օրերը: Ինչպէ՞ս վճարել այս պարտքը: Դուք մեծ բաժին մը ունիք ընտանեկան կեանքին մէջ: Ըսինք թէ առանց զաւակի ընտանիքին մէջ բան մը կը պակսի: Որքան տխուր է այն ընտանիքը, ուր մանուկը երեցած եւ վերստին առնուած է: Շատ փոքր եւ ծած ատեննիդ մեծ տեղ մը բռնած էք ընտանիքին մէջ: Ընտանիքը ուրախացուցած էք:

Հիմա մեծցած էք, երիտասարդներ եւ երիտասարդուհիներ, որոեօք տակաւին ձեր ծնողաց եւ ձեր ընտանիքին համար ուրախութեան պատճառ էք: Հին առած մը կ'ըսէ, «Պզտիկ զաւակ՝ պզտիկ հոգ, մեծ զաւակ՝ մեծ հոգ»:

Կը պատահի որ քրիստոնեայ ընտանիքին մէջ դժուարութիւն երեւան կուգայ, երբ զաւակները կը մեծնան: Երգչախումբին մէջ ժխորը կը սկսի: Ինչո՞ւ. զաւակը չունի այլեւս այն դիրքը որ պէտք է ունենայ: Ո՞րն է այդ դիրքը, զայն կարդացինք, «Հնազանդ եղէք»: Երկրի վրայ կատարեալ միայն մէկ զաւակ եղած է, Նազովրեցի Յիսուսը: Ո՛հ, թէ կարող ըլլայինք տանը մէջ իր ապրելակերպը տեսնել: Հօրենական տանը մէջ անցուցած կեանքին մասին շատ քիչ բան գիտենք: Երուսաղէմի տօնին ղեպքը Անոր այդ կեանքին միակ զրուագն է որ ունինք: Դուկ. Բ. 51, 52, Յիսուս այն ատեն 12 տարեկան էր եւ իր ծնողքին հնազանդ էր: Այս մանուկին ծննդեան ատեն, հրեշտակները երգած էին, եր-

կինքը բացուած էր, նաեւ Աստուած վկայութիւն տուաւ: Անոր համար թէ իր սիրելի Որդին է: Ան ամէն բանի Սկիզբը եւ Ստեղծիչն է: Սակայն մինչեւ 30 տարիքը ապրեցաւ համեստ տան մը մէջ եւ ծնողացը հնազանդ էր: Յիսուս անտարակոյս իր բաժինը ըրաւ ընտանիքը ուրախացնելու համար:

Ետ երթանք շատ մը դարեր: Անապատի մը մէջ, ժողովուրդ մը միացող լեռան շուրջ կեցած է, այս ժողովուրդը ամբողջ զողի մէջ է: Աստուած կը խօսի կրակի կայծակներու եւ թնդացնող փողի ձայնի մը մէջէն: Անիկա իր Օրէնքը կուտայ, որու ընթացքին կը լըսուին հետեւեալ խօսքերը «Պատուէ քու հայրդ ու մայրդ»: Աւա՛ղ, ասիկա շատերուն համար հինցած բան մը կերեւնայ: Իրաւ է թէ ծնողներ կան որ իրենց իշխանութիւնը չարաչար գործածած են: Իրաւ է թէ կան զաւակներ որոնց հանդէպ շատ խիստ վարժուած ցուցուած է, որոնք անխնայ ծեծ կերած են: Խեղճ տղաք, խեղճ աղջիկներ, որոնք կեանքի մէջ մտած են սրտերնին զառնութեամբ լեցուած: Բայց կ'ենթադրեմ թէ դուք այսպիսի պարագայ մը ունեցած չէք: Իսկ հնազանդութիւնը պէտք է, պէտք է որ հնազանդիք. ասիկա ճիշդ է եւ Տէրոջը հաճելի է: Այն պարագային միայն ձեր ծնողաց անհնազանդ ըլլանիդ կրնայ արդարացի ըլլալ, երբ խղճի խնդիր կայ: Պատուիրանը հնազանդութենէն աւելի է, «Պատուէ քու հայրդ ու մայրդ»:

Արդարեւ ասիկա հնազանդելէն աւելի է: Կըրնայ մէկը պարտաւորուած ըլլալով հնազանդի մէկին առանց զայն պատուելու: Դուք պէտք է պատուէք ձեր ծնողքը: Պէ՛տք է արդեօք ասոր համար շարժառիթներ փնտռել: Ո՛հ թէ ճանչնայիք անոնց սիրտը, կարենայիք գիտնալ թէ որչա՛փ վրդովմունք պատճառած էք ձեր ծնողաց, ձեր հօրը, մանաւանդ ձեր մօրը: Սիրեցէք, պատուեցէք զանոնք մինչեւ վերջը: Հոս նաեւ Յիսուս մեզի որպէս օրինակ կը կենայ: Անիկա խաչին վրայ դամուած է, այդ տանջանքին անհաւոր ցաւերը գրեթէ իրենց գործը լրացուցած են: Անիկա պիտի մեռնի քիչ ետք, բոլորէն անարգուած, մերժուած, Հօրմէն թողուած ըլլալով: Խաչին քով փոքր խումբ մը կեցած է. անոնց մէջ կը նշմարէ իր մայրը, որ անպաշտպան պիտի մնայ: Իր սիրտը այսքան մը վիշտերով լեցուած չէ որ այլեւս անոր վրայ չմտածէ: Ինք անոր տուն մը կը պատրաստէ. անմահ խօսքով մը զայն կը յանձնէ այն աշակերտին խնամքին գոր կը սիրէր:

Ահա ամենէն թանձր խաւարին մէջէն է որ լոյսը կը կրկնէ, «Պատուէ քու հայրդ ու մայրդ»։ Պատուեցէք զանոնք, ինքզինքնիդ անոնց վատահելով։ Կեանքերնուդ մէջ սեւէ բան մի ունենաք որ անոնցմէ ծածկուած ըլլայ։ Պատուեցէք

զանոնք, անոնց համար քնաւ Համչնալով։ Երիտասարդները երբեմն չար են՝ անխորհրդաբար իրենց ծնողաց թեթեւօրէն եւ վիրաւորական պատասխաններ տալով։ Սորվեցէք խորհիլ, սորվեցէք սիրել։ Կ'ուզէ՞ք ընտանիքին երջանկութեան համար ձեր բաժինը կատարել եւ աշխարհի տալ քրիստոնեայ զաւակի, երիտասարդի օրինակը։ Կ'ուզէ՞ք ձեր ծնողքը եւ Տէրը ուրախացնել, — Հնազանդեցէք, Պատուեցէք։ Եւ զայս ըրէք մինչեւ անոնց խոր ծերութիւնը։

Տէրը մեզի ճշմարիտ բնութեան ընտանիքներ տալ, ինչ զօրութիւն եկեղեցիին համար, ինչ օրհնութիւն իր թաղաւորութեան համար առանկ տուններ ունենալը։

Ինքզինքնիս քննենք, խոնարհինք։ Թշուառութիւն, նիս չծածկենք, զանոնք Տէրը բերենք։ Անիկա խրամատներ նորոգողն է, ինք նոր յալստութեանց հետ տալ մեզի խոստովանելու, հատուցանելու եւ իր լոյսին մէջ քալելու զօրութիւնը։

(Վերջ)

ԵՐԳ ՄԵԾԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԵՒ ՊԶՏԻԿՆԵՐՈՒ ՅԱՐՄԱՐ

ՄԻՆՋԵՒ Ի ՄԱՀ

Թարգ. Ֆրանս. Յ. Ն. Ղ.

Մինչեւ ի մահ հաւտարիմ ըլլանք պիտի,
 Մինչեւ ի մահ Արքայիդ — մեր Պետի.
 Սուրբ զրօշիդ տակ առիր մեզ Դու Յիսուս,
 Հոն պիտ կոռնինք, ու մեռնինք լիալոյս։

Բ. Սուրբ զրօշի տակ առիր մեզ Դու Տէր Յիսուս. Հոն պիտ կոռնինք քան չիք լիալոյս։
 Գ. Մինչեւ ի մահ՝ պիտ ընենք մենք իր յոյժ Եւ խաչարիւնա յարօցնալ Տէր Բրիւտոս։

Գ. Մինչեւ ի մահ՝ ուխտն է պայքարին մը. Զայնենք քան չիք արիւն անպիտան եղբայր.
 Դ. Մինչեւ ի մահ՝ զի յաղթեցիր Դու ինչ։

«Մինչեւ ի մահ» հաւտարիմ ըլլանք պիտի,
 «Մինչեւ ի մահ» Արքայիդ — մեր Պետի.
 Սուրբ զրօշիդ տակ առիր մեզ Դու Յիսուս,
 Հոն պիտ կոռնինք, ու մեռնինք լիալոյս։

Կրկնելով. —

«Մինչեւ ի մահ» ուխտն է պայքարին այս մեր,
 Զայնենք քան չիք սուրբ արիւնով փրկեալներ։
 «Մինչեւ ի մահ» պիտ ընենք մեր զըրօշն հոս
 Խաչդ արիւնոտ, Յարուցեալ Տէր Քրիստոս։

Վասն Քեզ Յիսուս ապրիլ, փա՛ռք օրհնեալ յաւէտ,
 Մէն մի ուղի Քեզմով է ծաղկաւէտ.
 Գառն Աստուծոյ, Քեզի ո՛վ չի հեռելի
 «Մինչեւ ի մահ», զի յաղթեցիր Դու ինչ։

«Մինչեւ ի մահ» հպատակ Քեզ ըլլանք մենք,
 Ապրի՛լ, մեռնի՛լ զըրօշիդ տակ կ'ուզենք.
 Վասն մեզ եղար հնազանդ Սուրբ Հօրդ ընդդէմ
 «Մինչեւ ի մահ», խաչիդ մահուամբ դժխեմ։ Կրկ.

Բայց Տէր գիտես, մենք անզօր ենք եւ տրկար,
 Ի յանք պիտի վրայ ճամբուն այն երկար,
 Թէ սուրբ խոստումդ ի կատար Դու չհանես,
 «Մինչեւ ի մահ» բռնելով պինդ զմեզ։ Կրկ.

Մեզ Սուրբ Հոգիդ կենսաւէտ ընէ զըւարթ,
 Եւ այլէ մեր կեանքին եղէզն ու յարդ.
 Այն ատեն մենք փրկեալներդ պիտի ըլլանք,
 Մահուան մէջ իսկ «բազմութիւնք յաղթականք»։ Կրկ.

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՍԻՒՆԱԿ

Անցեալ թիւին, «Միշտ յաղթական» երգին խօսքերուն մէջ անգղուշութեամբ կարգ մը սր-խալներ պատահած ըլլալուն, այս անգամ կրկին կը հրատարակենք, ներողութիւն խնդրելով միե-նոյն ատեն բոլոր երգի ուսուցիչներէն այս խալին համար: Երգը այս սրբազրուած խօսքե-րովը երգենք:—

Միշտ յաղթական, այս է մեր նշանաբան,
Միշտ յաղթական, թէ գոհուինք տեղն ունայն,
Զի յաղթութիւն կատարուի հաւատաւ,
Շնորհիւ Փրկչին, որ ծախու մեզ առաւ:

Մինչ Գողգոթա՝ հետեւինք պիտ' մեր Փրկչին,
Միշտ պահելով մահն աչաց մեր առջին:
Թէ Անոր պէս աշխարհէ հալածուինք,
Հետն յաղթական պիտ' մտնենք մենք երկինք:

Ո՛հ, համբերենք աշխարհի բիրտ ցաւերուն,
Դաւանելու Յիսուսի մեծ անուն:
Զի Ան է միշտ հիմն անշարժ մեր յոյսի.
Այս յոյսն երբեք Հպիտի ամաչի:

Հաւտանք եղբարք զօրութեանց վեհ, անմահ,
Որ Յիսուսի խաչէն մեզ կը ցուան:
Պահենք զըրահն հաւատքի անսասան,
Եւ յաղթենք միշտ ուժովն Իր սուրբ արեան:

.....

1936ի ՄԻՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐ

Ֆրանսահայ Աւետարանական եկեղեցիներու
Ը. համագումարը տեղի ունեցաւ Սեպտ 22-23,
Վալանսի մէջ, հետեւեալ ժողովականներու մաս-
նակցութեամբ:—

Marseilleի շրջանէն. Վեր. Յ. Ն. Ղազարոս-
եան, Աւետարանիք Վ. Սահակեան, Ս. Պաղգալ-
եան, Սբ. Գրաժախ Աւետարանիչ Կ. Պատաքեան,
Էդրք. Գ. Պարսամեան, Լ. Սիմոնեան:

Drôme-Ardècheի շրջանէն. Ardècheէն Վեր.
Ա. Օ. Փափագեան, Էդր. Մ. Սապալեան:

Վալանսէն Բրօֆ. Գ. Խայրկեան, Էդր. Ս. Տե-
րատուրեան:

Lyonի շրջանակէն. Լիօնէն Վեր. Ժ. Կ. Պար-
սումեան, Սբ. Գրաժախ Աւետարանիչ Լ. Նիկո-
ղոսեան, Աւետարանիչ Կ. Պարսումեան:

Սէնթ Էթիէնէն Աւետարանիչ Ի. Աբրահամ-
եան:

Parisի շրջանակէն. Պատ. Զ. Բ. Պուտաքեան,
Աւետարանիչ Մ. Վէքիլեան, Էդր. Հ. Պատիկեան:

A. C. O.ի միսիոնարութեան կողմէ Տնօրէն
Վեր. Dr. P. Berron եւ գանձապահ Prof. L.
Kuehm. Stè. Evangélique de Genèveի Տնօրէն
Վեր. E. Burnat, Վեր. եւ Տիկին Trocmé, Վեր.
A. Bastide, Վեր. M. Rohr եւ Էդր. Ս. Տէրտէրեան
եւ քոյր Զուարթ Ղազարեան Զուիցերիայէն Իբր
հիւր անդամ:

Միութեանս աշխատութիւնները կարելի է
բաժնել երեք բաժանումներու:

I Հոգեւոր ժողովներ.— Համագումարիս նը-
պատակներէն մին ըլլալով հոգեւոր գործիչնե-
րուն ներքին կեանքին մշակումը, լայն ժամա-
նակ տրուեցաւ աղօթածողութիւններու: Վեր. Dr.
Berron խօսեցաւ երկու անգամ նիւթ ունենալով
«Աստուծոյ թագաւորութիւնը մեր մէջ» եւ «Քրիս-
տոսը կրկին խաչը հանելը»: Վեր. A. Bastide
«Մեր կեանքով Քրիստոսը փառաւորելուն» շուրջ:
Վեր. Trocmé երեք անգամ «Հաւատք, Յոյս եւ
Մէք»ի մասին: Այս ժողովներուն Միութեան ան-
դամներէն զատ, մասնակցեցան նաեւ Վալանսի
եկեղեցիէն շատեր, ինչպէս նաեւ Էդրայրութեան
անդամներէն ոմանք: Աղօթածողութիւնը ցոյց
տուին որ շատեր օրհնուած էին, առաջնորդուե-
լով անձնաքննութեան, խոստովանութեան եւ նոր
նուիրումի: Վերջին օրը Տէրունական ընթրիքը
մատակարարուեցաւ Միութեան անդամներուն:

Թէեւ համագումարը տեւեց չորս օր, բոլոր
շաբաթը ամէն երեկոյ տեղի ունեցան աւետա-
րանչական ժողովներ զանազան գործակիցներու
առաջնորդութեամբ: Շատերուն ծանօթ է Վա-
լանսի դաշտին դժուարութիւնները: Արդարեւ մե-
զի ամէն օր կարելի եղաւ նոր կերպով մը չա-
փել եւ լաւ եւս զիտակցիլ տիրող դժուարու-
թիւններուն: Տակաւին աղօթք եւ ջանք չխնայ-
ուեցաւ, Աստուծոյ խօսքը սերմանուեցաւ առա-
տօրէն եւ համարձակութեամբ: Ժողովուրդը պա-
տասխանեց իրեն եղած հրաւերին: Ամէն գիշեր
բաւական բազմութիւն կը լեցուէր E. R.ի մեծ
տաճարին մէջ: Ոմանք թերեւս առաջին անգամ
ըլլալով կ'ուզային: Երկրորդ ժողովներու (after
meeting) ընթացքին կիրարկուեցաւ անհատա-
կան տեսակցութիւններու զրութիւնը: Յայտնի

եղաւ որ շատեր ազդուեցան եւ որոշեցին աւելի լրջօրէն խորհիլ հոգեւոր կեանքի վրայ: Տէրոջը վստահելով էր որ փակեցինք ժողովները, հաւատալով որ Աստուած հոգ պիտի տանէր Իր խօսքին, թափուած ջանքերը ծառայեցնելով վախճանի եկեղեցիին հոգեւոր յառաջդիմութեան: Աղօթենք առ այս:

II Տեղեկագրութիւնները.— Զանազան եկեղեցիներու տեղեկագիրներու ընթերցումը ուրախութիւն եւ քաջալերութիւն պատճառեց բոլորիս: Նկատուեցաւ որ հակառակ տիրող տագնապին — որ յաճախ կսկծալիօրէն զգալի եղած էր, ի մասնաւորի Մարտէյլ — եկեղեցիները յառաջ քալած էին Աստուծոյ զօրութեամբ: Ամէն տեղ, կարգ մը մանրամասնութիւններէ զատ, պահուած էին հին ուղեգիծները եւ յառաջդիմութիւններ ալ արձանագրած էին, մանաւանդ մանկանց միջեւ եղած գործին նկատմամբ: Տեղեկագիրներէն բըղ-խող կարգ մը հարցեր ընդունեցին իրենց անմիջական լուծումը կամ յղուեցան Executive Committee:

III Խորհրդակցական աշխատանք.— Միութեան զոնփակ նիստերուն ընթացքին քննուեցան բազմաթիւ խնդիրներ: Յիշենք տրուած որոշումներէն ոմանք:

1. Երկար խորհրդակցութեանց նիւթ եղաւ «Բանբեր» ի նիւթական վիճակը եւ 1937 ի ուղեգիծը: Նիւթականի հարցը լուծուեցաւ, բեռը հաւատարմութեամբ բաժնեկիւծ 4 շրջաններու միջեւ: Մեր պաշտօնաթերթը աւելի հետաքրքրական եւ օգտակար դարձնելու համար կարգադրութիւններ եղան: Նոր տարիին հաւանաբար գատէն հրատարակուի նաեւ Մուտիի կամ Ճան Ուէյլիի կենսագրութիւնը:

2. Քննել ցարդ մեր մէջ ի զօրու եղած եկեղեցական կանոնադիրը: Յառաջիկայ Միութեան ընթացքին խմբագրել զայն իր վերջնական ձեւով եւ շրջաբերութեան դնել մեր համայնքներուն մէջ:

3. Որ Dr. Berron յարաբերութեան մէջ մտնէ կարգ մը ֆրանսական շրջանակներու մէջ, մեր մանուկներուն դիւրամատչելի պայմաններով վազանձի երթալը կարելի դարձնելու համար: Նմանօրինակ կարգադրութիւն մը ընել նաեւ ծերուկ եւ անպատասպար կիներու համար:

4. Բրօֆ. Խայիկեանի յանձնուեցաւ յաջորդ Միութեան ներկայացնել թէ՛ կիրակնօրեայ դասերու եւ թէ՛ հայերէնի դասաւանդութեանց ծը-

րագիրներ: Յետ վաւերացման մեր եկեղեցիներուն մէջ կիրարկել նոր դասերը:

5. Փարիզի Հայ Աւետ. Եկեղեցին ընթացք տալով 1935 ի Միութեան ժողովի թելադրանքին, եկեղեցական ժողովով որոշած էր իր հովիւին ձեռնադրութիւնը եւ իր փափաքը յայտնած Միութեան: Համագումարը նկատի առաւ Փարիզի եկեղեցիին խնդրանքը: Որոշուեցաւ, — եթէ Տէրը կամի — յառաջիկայ Միութեան ժողովը կատարել Փարիզ եւ նոյն առիթով ալ ընել ձեռնադրութիւնը:

6. Միութիւնս համակրանքով լսեց նաեւ Փարիզի եկեղեցիին ձեռնարկը Issy ի մատրան շինութեան մասին: Գործակիցները խոստացան օգնել ըստ կարելւոյն: Խմբագրութիւնը խոստացաւ թերթին միջոցաւ Փարիզի կարիքը ծանօթացնել «Բանբեր» ի ընտանիքին:

Կը մաղթենք որ Տէրը Իր փառքին համար օրհնէ վերսիշեալ բոլոր աշխատութիւնները եւ զանոնք արդիւնաւորէ: Տէրը նաեւ նոր շունչ եւ կենսունակութիւն պարգեւէ Իր գործին, Ֆըրանսայի Հայ Աւետարանական եկեղեցիներու միջեւ:

Այս աղօթքով,

Քարաուղար Միութեան ժողովի
Զ. Բ. ՊՈՒՏԱՅԵԱՆ

Փարիզ

Խմբագրութեան կողմէ երկու խօսք.—

ա. 1936 տարին անցնելու մօտ է: «Բանբեր» նալ իր 11րդ թիւը կը դրկէ Ձեզի. 12րդ թիւը արդէն պատրաստուելու վրայ է: Մեր բաժանորդներուն մէջ կան ոմանք որ իրենց բաժնեկիւնները տակաւին մնարած չեն: Այս թիւով իրենց յուշարար մը դրկեցինք ու այս առթիւ ալ կը խնդրենք որ այն յետաւմաց բաժնեկիւնները ըստ կարելոյն շուտով յուղարկուին մեզի: Հանդիցողեցէք զմեզ: Մենք մեր պարտականութիւնը լման կատարեցինք Ձեզի հանդէպ, հաճեցէք դուք ալ նոյնը ընել մեզի Քրիստոսի խօսքին համաձայն:

բ. Անոնք որ «Բանբեր»ը 1937 ին շարունակել չեն ուզեր, թող հաճին կարելի եղածին համար շուտով իմացնել մեզի որ դադարեցնենք զայն: Իսկ որոնք որ բան մը չգրեն, պիտի ընդունին «Բանբեր»ը 1937 ին ալ, այն հասկցողութեամբ թէ «Բանբեր» ի բաժանորդագրութիւնը կը շարունակեն:

Զանքերնիս է «Բանբեր»ը աւելի մատչելի ընել ամենուն, ուստի հասցէք մեզի հետ միշտ ազօթակից ըլլալ: